



ՇԱՐԿԱԹԱԹԻՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՐԱԿԱՆ
Կը Հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:
Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻԱՑԵԱԿ ԵՎ ԶԱՆԳՈՍ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ԲԱՆԱՍՏԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Table with 2 columns: Subscription rates and advertising prices. Includes 'Տարեկան', 'Վեցամսեայ', 'Եռամսեայ' and 'Տարեկան', 'Քառասուն ֆրանք'.

Մտար կամ նամակ ուղղել Հետեւեալ Հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆՆԻ ԵՆՐԻՔ, ՇԱՐԿԱԹ, ԳՈՒՆԻՍ 25 1898.

Ս Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Բ

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Գաղթականութիւնը, որ
11րդ դարու սկիզբէն
իր աւերուած գործիչ
սկսեց մեր Հայրենիքի մէջ, վերջի տարիներս իր ընթացք
դէպի նոր աշխարհ ուղղել սկսած է՝ հոս ասպնջական
Ընթաց Սամի հիւրընկալ դրօշակին տակ կայ ու կենաց
պատմութիւն գտնելու համար: Ազգային մամուլն ու բե-
մը երկար ատենէ ի վեր մաքառած են շարունակ այս ազ-
գաւէր հոսանքին առջև. բայց հակառակ ամեն ջանից դեռ
գաղթականութիւնն կուգայ անարգել՝ կարծես Հայաստա-
նը յԱմբրիկայ փոխադրելու հաստատուն որոշմամբ: Թէ-
պէտեւ թուահամար մը չունինք տակաւին, ամերիկեան
այս գաղթականութեանց ճիշդ թիւը գիտնալու համար,
բայց միջին կաշուով 15,000է աւելի անհատներ ունինք այս
հետուր ու նոր աշխարհի մէջ: Ասոնք ընդհանրապէս
ազգին երիտասարդ մասը կը ներկայացնեն, և հետեւաբար
Հայութեան ջիւղերն ու ամենէ կենսական գործիքներն է
որ կը բերեն իրենց հետ՝ հոս այլ և այլ պարագաներու
տակ մաշելու ու ոչնչացնելու համար: Երկրի սովորու-
թեանց, կենաց ու աշխատութեան անվարժ մեր ան-
փորձ երիտասարդը, պատանին շատ անգամ, գործարա-
նի մէջ չէ որ իրայն կը փտտէ իր կեանք, որպէս կը կար-
ծեն ոմանք, այլ շատ անգամ ամուրի կենաց դժոխային,
բնական և անբնական հետեւութեանց անճարակ գերի՝ կը
Հայի ու կը Հայի ամեն օր: Գործաւորութենէ անհամեմատ
սոսկալի է այս կեանք, որոյ անչէլ կրակներուն մատուցած
մէկը գերեզմանի մէջ միայն կրնայ հանգիստ ու ազա-
տութիւն փնտռել:

Ուշադրութեամբ գիտած էք երբէք ամերիկեան Հայ
երիտասարդը — գէթ երիտասարդութեան մի ստուար մա-
սը — նա ծերացած է, բարեկամ, իր ծաղիկ հասակին մէջ.
վատութիւնը մարմնացած է դէմքին վրայ. կեանքը կար-
ծես բեռ մը դարձեր է իրեն համար. յուսահատութիւնն ու
դժգոհութիւնը զգալի են իր բոլոր խօսքերուն ու արտա-
այտութեանց մէջ: Դէմքը տժգոյն, ինքը վտիտ, մեղա-
մայտնուած, վհատ, տկար ու ծանձրացած. ահա այս է ճշգ-
րիտ նկարագիրը մեր թոռմած երիտասարդին, որոյ այ-
տերէն երբեմն վարդ կը կաթէր՝ երբ օր մը ուրախ գուարթ
ու յոյսերով լեցուն եկաւ ազատ դրօշակին տակ ապրիլ
ԱՂԱՏ՝ ծնողաց հակողութենէն ու բռնութենէն (?) ան-
կախ: . . . Եւ այս կենդանի կամաբը արդեն չէ միայն
գործաւորական կենաց, այլ անկէ անդին, մութին մէջ,
բասմեւելի կեանքի մը մէջ փնտռելու է այս անճարակ զո-
հի անկամ ու քայքայման բուն պատճառը:

Եւ ո՞վ է պատասխանատուն այս բոլոր չարաց. զոհը
ի՞նք, որ անփորձ ու անգիտակ՝ կրակին վազող թիթեռ-
նիկին պէս մտած է կրակներու մէջ. թէ ա՞յն որ կոչում
ունէր մէնտոր մ'ու կարապետ մ'ըլլալ անոր՝ իր այս վար-
դագոյն փուշերով պատուած ճանապարհին վրայ: Մեր
նիւթէն չի շեղելու համար թոյլ կուտանք որ ընկերոջը
իրենք պատասխանեն այս կարևոր հարցմանց:

Հայ երիտասարդը — բացառութիւններն մէկդի թող-
լով — աւելորդ է ըսել թէ մատուցած է այս անկեալ ու
ազգակործան վիճակին՝ ընդհանրապէս՝ ամուրի կեանք մը
անցունել ստիպուած, և արժանաւոր առաջնորդներ չու-
նեցած ըլլալուն համար: Հարկ չ'կայ թերևս յաւելուել
թէ այս ամուրի կեանք, մանաւանդ այս երկրի մէջ, պատ-
ճառ եղած է քստմեւելի կոտորածի մը, որուն ականատես
կ'ըլլանք ամեն օր՝ առանց ո՛ր և է միջոց մը խորհելու տը-
րամարտութիւնն ունենալու: Թրքական վերջի ջարդերը
իրենց յարմար տեղը բռնեցին ժամանակիս պատմութեան
մէջ, և օր մը ի հարկէ իրենց պտուղը կուտան. բայց այս
կամաւոր և աւելի սոսկալի կոտորած կ'անցնի առանց նը-
կատուման և առանց ո՛ր և է արդիւնք տալու հաւանակա-
նութեան: Երբ Թուրքը մեզ սրէ անցունել սկսեց, աշ-

խարհ տակն ի վրայ եղաւ, Հայ գաղթականութիւնը իրար
անցան. բայց այս անուրի ջարդը, որ տեղի կ'ունենայ մեր
ամենօրեայ կեանքի մէջ, պարտաւորութեամբ կը դիտենք
ու չենք տեսներ զայն: Հայ ազգը՝ տարին միջին կաշուով՝
հինգ հազար հոգի զոհ կուտայ այս ջարդերուն իր Ամե-
րիկայի Հայ գաղթականութեան մէջ միայն, և ոչ ոք կըր-
նայ ըսել թէ այս կորուստ որչ'ափ ծանր պիտի ըլլայ ա-
պագային՝ եթէ իրաց վիճակը շարունակէ անփոփոխ մնալ:
Եւ ի՞նչ պէս պիտի կրնայ զօրանալ ու բազմանալ այս տը-
կար ժողովուրդը. երբ մէկ կողմէն սրի ճարակ կը դառ-
նայ իր Մայր Հայրենիքին մէջ, միւս կողմէ, իր կայտառ
երիտասարդութիւնն — ազգին յոյսերն ու սիրներն — կ'եր-
թան օտար աստղերու տակ կայ ու բազմա ճարակու, և որ
աւելի սոսկալին է, այս վերջինք՝ մարտիկանց գերի ին-
կած՝ ամուրի կը մեռնին. . . առանց իրենց անունը կրող
յարդը մը տալու այն ազգին որ կեանք տուաւ իրենց:
Տենդոտ ատենախօսութիւններու մէջ՝ խանդավառած՝ կը
պտտանք միշտ թէ ազգին համար Հայրենասիրութիւն մ'է
մեռնիլ, բայց է՞ր չենք ալ քարոզեր թէ նուազ Հայրենասի-
րութիւն մը չէ նոյն ազգին համար ապրիլ և երջանիկ ու
արդիւնաւոր ապրիլ: Արդարև մեռնիլ հարկ է ազգի փր-
կութեան համար, բայց մոռնալու չենք թէ ազգը կը պա-
հանջէ իր զաւակներէն՝ մեռնելու յօժար և պատրաստ
սերունդ մը յարուցանել մեռնելէ առաջ:

Այս ամեն ըստածներուն ընկալն հետեւանք է հարց-
նել թէ ինչո՞ւ ուրեմն Հայ երիտասարդը չի փութար ա-
մուսնանալ այս բոլոր չարաց առջև կրնալ առնելու հա-
մար: Այս հարց ի հարկէ արդարացի է. բայց մենք չենք
ուզեր ուղղել զայն, զի գիտենք թէ պատասխաններն
բազմակողմանի և կնճռոտ են շատ: — Հայ ազգի չ'կայ
հոս — ահա պատասխան մը որուն գոհացում տալը լրագ-
րի մը իրաւասութեանն շատ վեր է ամեն պարագայի
տակ: Սակայն իրաց ներկայ դրութեան մէջ մամուլը նե-
րելի է հարցնել թէ ինչո՞ւ ազգային իշխանութիւնը մի-
ջոյններ չեն խորհիր այս և ուրիշ լուծելի կնճռոտներ լու-
ծելու համար: Պատրիարքարան, առաջնորդներ, վարդա-
պետներ, քարոզիչներ և ուրիշ շատեր կ'աշխատին այսօր
Հայ որբերու փրկութեան համար, բայց բնաւ չեն յիշեր
թէ 10,000է աւելի հասունացած որբեր ալ Ամերիկայ պան-
դըխտած են՝ շրջապատուած այն վտանգներէ որոնցմով
շրջապատուած են մեր 60,000 պղտիկներն:

Հայ ազգի շայտատանի մէջ կը խամրի. Հայ երիտա-
սարդը հոս տարածամ կը ծերանայ՝ այլ և այլ սպառնալ-
եաց ու անպատեհութեանց գերի: Կարե՞լի է Ամերիկայի
մէջ գտնել ուրիշ ազգ մ'ալ որ Հայոց չ'ափ ամուրի կըտ-
րիճներ (?) ունենայ իր մէջ. . .

Գործնական ազգասէրներու, ազգի բազմին ու ճակա-
տաւորին հետ գործ ունեցող անկեղծ գործիչներու համար
մտածելու խիստ կարևոր խնդիր մ'է այս. — Հայ ազգի կը
հոն, Հայ երիտասարդը հոս — ահա՛ ինչորոյն ամենամեծ
կնճիռը, որ լուծման կը կարօտի:

Երբ Հայ երիտասարդ մը իւր կեանք օտարուհիի մը
հետ կապել կ'ստիպուի՝ բացառիկ պարագաներու տակ,
մենք ընդհանրապէս կը քննադատենք զայն. և ազգային
տեսակէդէ նայելով իհարկէ մեղադրելի են ասոնք, զի օ-
տարէ մը Հայ մը չի ծնիր. բայց մոռնալու չենք թէ ոչ
նուազ քննադատութեան արժանի են ասոնք որք՝ հակա-
ռակ իրենց պարտականութեան, չեն կարող և չեն ջանար
ուրիշ ճամբայ մը ցոյց տալ երիտասարդին՝ բնութեան
պատգամն ու մարդոց օրէնքն կրնայ յարգելու համար: Եթէ
Հայ երիտասարդը Հայ ազգին համար պիտի մեռնի և կոր-
ուի անպատճառ՝ ամուրի ապրելով և կամ անոր սոսկալի
ու հաւանական հետեւութեանց երբեմն գերի լինալով, մեզ
կը թուի թէ լաւագոյն է թող տալ անոր որ երթայ և գէթ
օգտակար ըլլայ ուրիշ ազգի մը մէջ:

Յարմարագոյն առիթն է որ հրապարակաւ հարցունենք
այժմ գէթ մ'եր Ամերիկայի վարդապետներէն, քառասնա-
ներէն ու քարոզիչներէն թէ ի՞նչ կ'ընեն ասոնք և ի՞նչ
ըրին այս մասին: Աւետարան քարոզելով, քանի մը խը-
րատականներ խօսելով և կամ մի քանի երգեր ու շարա-
կաններ երգելով հոս մը կարելի չէ կառավարել: Երիտա-
սարդութիւնը կը փտտի հոս ամեն օր, ի՞նչ կը մտածեն
և ի՞նչ մտածած ունին այս Աստուծոյ պաշտօնեաներն՝
գէթ վտանգը մասամբ վանելու համար:

Հայ ժողովուրդը արիւն քրտինք թափելով կը պահէ
իր այս հովիւներն. և կը պահանջէ աւետարանի իսկ խօս-
քով, որ այս մարդիկ իրենց անձը իրենց հօտին վրայ
դնեն՝ բառին բուն նշանակութեամբ. . . . 2. Է.

Հ Ր Ա Ի Ե Ր

Նիւ Եորքի Հայաստանեաց Եկեղեցեաց դպրաց դասը կը
խնդրէ լաւ ձայն ունեցող երիտասարդներէն զայլ և ընկե-
րանալ խմբիս: Դպրութեան վարժ չեղողներուն յատկա-
պէս դաս պիտի տրուի:
Մասնաւորապէս կը խնդրուի ծնողներէ որ իրենց
մանր տղաներն ալ շրկեն՝ դպրաց դասուն միանալու
համար: Ամէն ջանք չի պիտի խնայուի անոնց՝ դպրու-
թիւն ուսուցանելու համար:
Արարողութիւնը կ'ըսկսին ամեն կիւրակէ, կէսօրէն
յետոյ, ժամը 1ին, Ոսկերբան եկեղեցեաց մէջ, 39րդ փո-
ղոց Դրդ ավելի անկիւնը: Ի դիմաց Դպրաց դասու
Մ. ԹԱՃՃՈՒՆ Դպրագետ

ՏՈՒՆԻՔ, ՈՐ ԻՐԱՒՈՒՆԻՔ ՈՒՆԵՆԱԲ
Պ Ա Հ Ա Ն Ջ Ե Լ

Մի քանի ամսից Բարեգործական
Ընկերութեանը տարին կը բոլորի: Սա
միակ կանոնաւոր և կարևոր ազգա-
յին հաստատութիւններէց մինն է, որ
անցեալ տարի երկարատեւ երկուքով
ճգնաժամի ցաւերին ու վիշտերին
յամառութեամբ դիմադրելով յաղ-
թանակով ծնեցաւ:

Անցեալ տարի այս ժամանակնե-
րը տխուր օրերի շարունակութիւն
ներն էին Նիւ Եորքի գաղթական տա-
ռապետ Հայերի մի ստուար մասի
համար. ամեն օր գրեթէ լուռ էր
թշուառների ճիշը, ոմանց յուսահա-
տական մրմունջը, որ զգայուն սրտե-
րի վերայ շատ տխուր տպաւորու-
թիւն էր թողնում. սակայն բաւա-
կան չէր տխուր տպաւորութեան ազ-
դեցութիւնը. պէտք էր գործնական
քայլ առնել. մարմնացնել թշուառ-
ներին իրական օգնութիւն հասցնելու
զաղափարը:

Եւ իրական օգնութիւն հասցնե-
լու զաղափարը արձագանք գտնելով
ժողովուրդի ցաւերին մասնակից եւ
անկեղծ մի քանի դպրուհի երիտա-
սարդներին սրտում, նախաձեռնարկ
եղան Նիւ Եորքում հաստատել Բա-
րեգործական Ընկերութիւնը, առանց
նկատի առնելու իրանց տխուր պա-
րագաներն և նիւթական անցուկ վի-
ճակը:

Մենք հարկ չենք տեսնում առաջ
բերելու նորանց կրած զրկանքները,
նախատինքը և գործի սկզբում ոմանց
կողմից առաջադրուած վճատեցուցիչ
բանառասանները. բայց նորանք այս
բոլորը ի յոյնիս համարելով՝ ձգտում
էին բարձրագոյն նպատակին հասնել,
զաղափարը մարմնացնել: Փոթորկա-
լից ժողովները յարգելիցին, փոթո-
րիկներն ու մարմնակերի միջոց ծնունդ
տուա յուսատու մանուկը — Նիւ Եոր-
քի Բարեգործական Ընկերութիւնը —
և թէ և իր սկզբնական քայլերը շատ
տկար, բայց այժմ սկսել է աչքի
ընկնող գործեր կատարել: Տիգրիսի
ընթերցողներին, Բարեգործական Ըն-
կերութեան համառոտ տեղեկագրից
յայտնի է թէ որքան գործ է կատա-
րել: Թերևս գտնելն մարդիկ, յատ-
կապէս Ընկերութեան անդամներէց,
որոնք եղածները աննշան համարե-
լով՝ շատին սպասելին կամ աւելին
պահանջէին. ինչ ասենք. դուցէ իրա-
ւունք ունենային, եթէ կատարած
լինէին այն աննշան պարտքը, վճա-
րած լինէին կամաւորապէս ստանձ-
նած շարաքանութեան ինք սէնթ չնչին
տուրքը, մի բան որ ո՛չ ներելի և ո՛չ
տանելի է անդամներ կողմից, մա-
նաւանդ այժմ, երբ Ընկերութեան
դրամական վիճակը շատ անճուկ է,
երբ Ընկերութիւնը մտադիր է ձեռ-
նարկել նորանոր գործերի. երբ պա-
տեարագի պատճառով գործերը թու-
լացել են և անցեալ տարուայ դժուար-
ակիր օրերը վերսկսուած են, երբ
Ընկերութեանը դիմողներ թիւը որ
ըստ օրէ ստուարանում է, ընկերու-
թեան անդամները պէտք է մի ան-
գամ ընդ միշտ վերջ տան զանցա-
ուութիւններին. պէտք է մի կողմ
թողնել անհոգութիւնը և փութան
վճարել իրանց պարտքը:

Դա անհրաժեշտ է Ընկերութեան
շահի և նոյն իսկ անդամներ համար,
որպէս զի իրանց պահանջը, իրանց
ձայնը յարգել տան: Վարչութեան
պաշտօնավարութեան տարին շուտով
կ'ըրանայ և նոր վարչութիւն ընտրե-
լու խնդիրը տաք տաք վիճաբանու-
թեան առարկայ կ'ըլլանայ ընդհանուր
ժողովում: Մենք հաւատացած ենք,
որքան անդամ, այնքան ընտրելի կ'ա-
ռաջարկուի: Նախ՝ յարգել ընտրու-
թիւնը նախկինի պէս չ'է. նոր վար-

չուծութիւնը հարկաւ առանց դրամա- գրութեան գործը չի ստանձնել. և երկ- րորդ՝ յաջորդ ընտրութեան ժամա- նակ միայն վճարող անդամները իրա- լունք կ'ունենան ընտրութեանը մաս- նակցիլ. ուրեմն տուէ՛ք, որ իրաւունք ունենաք պահանջել, իրաւունք ու- նենաք ձեր ձայնը յարգել տալ:

Հ. ԱՐՁՈՒՄԱՆՆԵՐ

Մ Ա Ն Ր Ա Ն Ո Ւ Ր Ք

—Մեր Մանչէսթըրի թղթակիցը կը լսէ թէ վերջերս Ամերիկայէ Խար- բերդ վերադարձող Հայերն ապահո- վապէս հասած են Հայրենիք, և թէ Սամսոնէն կառավարութեան կողմէ քանի մը հեծելազորք ընկերացած են ասանց՝ ապահովութեան համար:

—Եւր Եորթէ քանի մը շարժա- ներ առջ Տաճկաստան զրկուող մի ուրիշ աղքատ Հայ Իսթէնթըրուէն մէջ ձերբակալուած, հսկողութեան տակ Տիբրանակերտ զրկուելով՝ հոն բան- տարկուած է՝ թերևս Ամերիկայ ե- կած ըլլալու ամբաստանութեամբ: Ինչ քրէական յանցանք:

—Կարապետ Էմիրխանեան անուն Չմշկածակցի սահմանը, որ խանութ մ'ունի ի Մանչէսթըր, վերջերս տեղ- լոյն Հայոց սմանց պատուոյն դէմ ծա- նըր խօսքեր ըրած ըլլալուն համար, քաղաքին կառավարչապետին կողմէ կանչուած ու յանդիմանուած է: Մեր թղթակիցը կ'ըսէ թէ շատ մը Հայեր առանձին հանրագրութեամբ պիտի գիտնան կառավարչապետին՝ խնդրելով որ այդ Հայն դուրս հանուի Մանչէս- թըրէն:

—Անցեալներն Յ. Ազատեան ա- նուն մի նորեկ Հայ իւր ընտանեօք Հանդերձ վար դրուած էր Պուրճ Թ- Ֆիսին մէջ, Յրէզնոյ՝ իր եղբոր քով թրթալու բաւական քանակութեամբ չունեցած ըլլալուն համար. և եթէ մինչև մէկ շաբաթ հարկաւոր գու- մարն կարելի չ'ըլլար հայթայթել, նորեկներն յայտնուէին Գաղ- թականական յանձնարարի որոշմամբ: Բասըլ Կարտինի Հայ թարգմանի աշ- խատութեամբ և Բարեգործական Ընկերութեան գործակալի ձեռքով այս խնդիր նորեկին եղբոր հետա- գործեցաւ, և անցեալ շաբաթ, պայ- մանագրամի վերջին պահուն, պէտք ե- ղած դրամը հասաւ Յրէզնոյն, ու բանտարկեալը ազատ արձակուեցան:

—Պատ. Հայկունի Կրանտ ձուրի մէջ կը ծառայէ քանի մը շաբաթէ ի վեր:

—Տիրաք Տ. և Մ. Գարակէօզ- եան, Պրօտուէի ծանօթ վաճառա- կաններն, առանձին նամակաւ մը կը խնդրեն մեզմէ ծանուցանել թէ, Ուէսթ Հոպըրընցի Ա. Գարակէօզեան անուն սրճավաճառ Հայը, որ ՏԻԳ- ՐԻՍԻ մէջ իր գործ ծանուցանել սկը- սած է վերջերս, տարբեր Գարակէօզ- եան մէ, որ ո՛ր և է յարաբերութիւն չունի իրենց տունին հետ:

—Կիւրիւնցի Հայ մը անցեալները կը լսենք թէ իր մի քանի տղար դը- րամը դրամատոն մը դնել կ'որոշէ, ու թարգմանի մը միջոցաւ գիտում կ'ընէ պանքայի մը գանձապետին. այս վերջինս երբ ստորագրութեան տետրակը կը ներկայացնէ Հայուն՝ ստորագրելու համար, թարգմանն կ'իմացնէ իրեն թէ Հայ դրամատէրը ո՛չ անգլիներէն և ո՛չ ալ Հայերէն կա- րող էր գրել: Գանձապետը ի հարկէ կը գարմանայ, և Հայուն ստակն առ- նելու համար պայման մը կ'առաջար- կէ. այն է թէ Կիւրուցիին 24 ժամի մէջ 3 անգլիներէն բաւեր գոց սոր- ուի: Մեր բարեկամը կը մերժէ այս ծանր աշխատութիւնը, ու ամերի- կացին այդ կողմի տգէտ մէկու մը ստակը նախապատիւ կը սեպէ չ'ըն- դուելի դրամատան մէջ:

—Մեր նէշուէի թղթակիցը կը գրէ մեզ թէ՛ Թովմաս Պոյաճեան անձի Տիբրան անուն որդին՝ վեր- ջերս անյայտացեր է՝ մեծ մտահոգու- թիւն պատճառելով իր ծնողաց: Տիբ- րան, որ իւր հօր գործաւորութեան ժամանակ ու անոր ջանիւք լաւ կըր- թութիւն մը առած էր, իր ծնողաց միակ նեցուկը կը համարուէր:

—Պօթոնէն կը գրեն մեզ «Փրօ- վիտէնսի մէջ Մարտիրոս Չառլըքըն անունով Հայ մը երկու անգործ Հա- յեր կը համոզէ որ իրեն հետ ընկեր ըլլան՝ դրամագլուխ դնելով, որպէս զի Սուլթանի վրան գրուած թատե- րական խաղ մը ներկայացնեն: Խեղճ Հայերը —որոնց մին՝ Պօղոս Մինաս- եան՝ 300 տղարի չափ կուտայ Չար- լըքընի —Պօթոն կուզան խաղը տա- լու համար: Հոս չեն յաջողիր. դը- րամին կը պակսի, և այս անգամ Չարլըքընը իւր մատանին կը յանձնէ Պօղոսին որ տանի Փափ Շափը եւ ստակ առնէ: Պօղոս մատանին վրայ 75 տղար կ'ուտանայ, և խորհելով թէ իր առջի առած ստակները կորսուած են, 75 տղարը քովը կը պահէ, և կը մերժէ տալ Չարլըքընի: Անցեալ օր Չարլըքըն Պօթոնի օստիկանութեան դիմելով՝ ձերբակալել կուտայ Պօղո- սը, իբր թէ իւր մատանին գողցած տարած էր: Պօղոս 10 օրի չափ բան- տը մնաց: Վերջէն բարեկամներ վը- ճարեցին 75 տղարը և դատարանի ծախքը, ու Պօղոս ազատ արձակուե- ցաւ»:

—Անցեալ շաբաթ երեկոյ Ուս- թըրի մէջ, Օր. Թ. Ռատիկեան ամուս- նացաւ Տ. Սարգիսեանի հետ: Հար- սանեկան այս հանդիսին մէջ կը լը- սենք թէ սոսկալի արկած մը պա- տահած է: Տ. Տիրատուրէն, հան- դէսը զուրպալի ընելու նպատակաւ, հարսի կերպարանք մտնելով պարել կսկսի. Տ. Եղաբեան կեղծ հարսին կունկը կենէ, ու Տօնապետեան, իր ուժը փորձելու մասօք վեր կը ցատ- կէ ուժգին, անանկ որ Եղաբեանի գլուխը առատաաղին կը գարնուի, ու ցցուած երկաթ խողովակի մը ծայրը իբր կէս մատնաչափ գլխուն մէջ կը մտնէ: Վերադարձի վիճակը ծանր է դեռ, թէ և վտանգը անցած է կրտսի:

—Թորոյ Հայոց սմանց բարոյա- կան անկեալ վիճակը նկատողութեան առնելով՝ քաղաքին Հայք ընդհա- նուր ժողով մ'ունեցած են ամոցս 19ին, ուր յանձնախումբ մը ընտրը- ուած է՝ Հայոց բարոյականի բարձ- րացման համար աշխատելու պաշտօ- նով: Այս յանձնախումբի անդամներն են Տիրաք Չարչեան, Պարսամեան, Հոփրամաղեան և Էսիկեան:

—Փոլ Ռիվըրէն Յունիս 20 թու- կանաւ կը գրեն. «Այսօր Պարբերի Աղնցիի գիրդէն Օսկոնան անուն հա- յը ձերբակալուեցաւ՝ իւր գործած գործարանէն մեծաքանակ կտաւ գող- ցած ըլլալու ամբաստանութեամբ: Ոստիկանութիւնն այս անձի Իռլան- տացի տարփածունին սենեակն ալ խու- գարկելով՝ գողոնին մէկ մասը ձեռք ձգեց: Օսկոնան որ 7 տարիէ ի վեր Ամերիկայ եկած է, հանրածանօթ մէկն է հոս: Այս մարդ կին մ'ու երկու դաւակներ ունի Հայրենիքի մէջ. բայց հոս յիշեալ Իռլանտացի աղջկան հետ ամուսնանալ ուզելով՝ անցեալներն «հրաժարական» նամակ մը զրկեց իր կնոջ ըսելով թէ «ես հոս ամուսնացած եմ, դու՛ ալ հոն գլխուդ ճարը տես»:

—Անցեալ Կիրակի ազգային ընդհ. ժողով մը տեղի ունեցաւ Ուսթըր Ս. Փրիչի ժողովարահին մէջ: Արժ. Մալթոց վարդապետ իւր տարեկան տեղեկագիրը կարդաց. Հոգաբարձու- թեան շրջանը լրացած ըլլալով՝ ընտ- րելեաց ցանկ մը պատրաստելու պաշ-

տօնով յանձնախումբ մ'ընտրուեցաւ: —Փրօվիտէնսի Պուլթըն լրա- գիրը կըսէ թէ անցեալ շաբաթու Յով- հաննէս Մուրատեան անուն անձը քա- ղաքին Մէնթըն Ավրիւի վրայ կին մը բռնաբարած ըլլալու ամբաստ- նութեամբ ձերբակալուած, ու յան- ցանքը խոտովանելով՝ 10 տարի բան- տարկութեան դատապարտուած է: Այս մասին մեր թղթակցի վերջի պա- հուս հազորդածներն գալ անգամ:

ՄԱՀԱԳՈՅԺ

Տ. Յովակիմ Էքիւզեան, Սե- բաստիացի 32 տարեկան երիտասար- դը, որ Կ. Պօլսոյ 96ի ցոյցէն վերջ Ամերիկայ եկած էր, ամոցս 16ին յանձնարուեցաւ կեղծ թուղթով հի- ւանդանոցին մէջ: Հանգուցեալին մար- մինը թաղուեցաւ Լորէնսի գերեզ- մանատան մէջ: Թաղման արարողու- թիւն կատարեց Տ. Մոշթոց վրդ.:

Ե. Բ. Ը. ԵՒ ՀԱՅԲ

Երիտասարդաց Գրիտոնէական Ընկերութեան 23րդ փողոցի ճիւղին կողմանէ պաշտօնական նամակ մը ստացանք, որով կը խնդրուի մեզմէ ծանուցանել թէ յիշեալ ճիւղին վա- րիչները վերջերս նկատելով որ քա- ղաքին մէջ Հարիւրաւոր Հայ երիտա- սարդներ կան, և ճանչնալով անոնց բարի յատկութիւններն ու այս օտար երկրի մէջ անոնց ունեցած կղզիաց- եալ վիճակը, որոշած են Հայոց յա- տուկ մասնաճիւղ մը հաստատել նոյն շէնքի մէջ: Այս մասնաճիւղի վերա- բերող Հայերն պիտի վայելեն հետե- եալ առանձնաշնորհումներն.

- 1. Ընդունելութեան և ընթեր- ցանութեան սրահներու գործածու- թիւնն՝ միւս անդամներու պէս: 2. Մարմնամարզութեան և բա- ղանեաց գործածութիւնն շաբաթը մէկ գիշեր: 3. Մասնաւոր սրահի մը գործա- ծութիւնն, Չորեքշաբթի և Երաբթ գիշերներն, ընկերական և իրթական և գրական նպատակներու համար:

Հայ մասնաճիւղի անդամներու թիւը պիտի ըլլայ 50: Տարեկան տուր- քըն է 3 տղար միայն, (վեց ամիսը մի անգամ մէկ ու կէս տղար վճա- րելու պայմանաւ) որ կանոնաւոր գը- նոյն կէսէն ալ պակաս է:

Անդամակցելու միակ պայմանն է աղէկ բարոյականի տէր ըլլալ: Լուսաւորչական և Բողոքական Հայք կը հրաւիրուին՝ առանց ո՛ր և է խտրութեան:

Այս հաստատութեան ազատա- կան ոգին ցոյց տալու համար նամա- կը կ'ըսէ թէ՛ բացի բողոքականներէ Հարիւրաւոր կաթողիկոսն և հրեայ- ներ անդամեցած են անոր:

Միանալ փափաքող Հայերն կը հրաւիրուին այս երեկոյ ներկայ գըտ- նուիլ նախնական ժողովին, որ տե- ղի պիտի ունենայ 23րդ փողոցի և 4րդ ափսի անկիւնն Ե. Բ. Մ. շէն- քի՝ թիւ 1 սենեկին մէջ, երեկոյեան ժամը՝ 8ին:

ՀԵՐԳՈՒՄ ՄԸ

Եւր Եորթ, Յունիս 20. Բաղաքին Հայոց մէջ սիւսյ տա- րածայնութիւն մը ելած է թէ «Կ. Պօլսոյ Ազգ. Պատրիարքարանէն պաշ- տօնական նամակ եկած է ինձ, որ- պէս զի Հայ գաղթականութիւնը յոր- դորեմ իրենց Հայրենիքը չը վերա- դառնալ, վրան զի Մայր Հայրենիքի մէջ ապահովութիւն չը կայ և այլն»: Մտքերը հանդարտեցնելու համար պարտ կը համարիմ ըսել թէ՛ այս ա- մենը սոսկ տարածայնութիւններն են, և բողոքովին սխալ, զի ինձ ո՛չ պաշ- տօնական և ո՛չ անպաշտօն նամակ եկած է Պօլսէն: Աղօթարար ԽԱԿ. Վ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ն Ո Ր Ա Վ Է Պ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն ԱՆՄԵՂ ՁՈՂՆԵՐ Բ.

Հրանտ Սուրէնեանը էրզրումցի էր: Հարուստ ծնողաց միամօր գա- լակ Սուրէնեանը աւարտելով Հայրե- նի քաղքի Սանասարեան վարժարա- նը, առանձին հակուած է ունենում դէպի ուսուցչութիւնը. ծնողները մեր ժամանակի վաճառականների շար- քում մի եզակի բացառութիւն կազ- մելով, չեն հակառակում Հրանտի բը- նական ձգտումներին, միայն փափա- քում են ամուսնացնել նորան: Սու- րէնեանը չի մերժում ծնողաց առա- ջարկութիւնը. նա ինքն էլ զգում է որ ուսուցչական ասպարէզը փոշոտ է. Հայ ուսուցչի կեանքը փոթորակից է, ցաւեր ու վիշտեր սպասում են նորան. իր աշխատութիւնը լոկ դա- սատուութիւն չէ, այլ, բացի դասա- տուութիւնից, պարտաւորած է կը- ւելու ժողովրդի մէջ ոսկրացած նա- խապաշարմունքների, տիրող վատ կարգերի և որ զլխաւորն է, աղայա- կանութեան կամայականութիւնների դէմ. սակայն ընտանիքը թեթևաց- նում է բեռը. ընտանիքը կ'ընթանո- րոգի սպառած ուժերը, աւելի բու- ուրն, աւելի եռանդով պայքարը մը- ղելու: Ընտանիքը նման է անապա- տի մէջ գտնուած հազազիւս ովա- սիսին, որ աւելի հասարակական գոր- ծիչները վայելելու իրաւունք ունին, ուստի ծնողաց առաջարկութիւնը շատ խեղացի և նպատակայարար էր. Սու- րէնեան ընդունեց և խնդրեց որ ընտ- րութեանը չ'խառնուին ծնողները, որ ինչպէս յայտնի է, ծնողները ան- բռնաբարելի իրաւունք են համա- րում իրանց, հետեւելով պապերի ան- չեթեթ սովորութեան: Սուրէնեան ամուսնանում է աղքատիկ ընտանի- քի՝ շարքաջ կեանքի վարժ, սակայն լարեկիրթ, զարգացած օրիորդի մը հետ, որը, ուսուցչական տաժանելի ասպարիզում, իր անբաժան ընկե- րակցութեամբ միակ նեցուկն է լի- նում. իր հրեշտակային բնաւորու- թեամբ թեթևացնում է նորա ծանր աշխատութիւնը: Սուրէնեանը սիրով անձնատուր է լինում սիրած գոր- ծին՝ մատաղ սերնդի կրթութեանը: Բոցի ուսուցչական լինելուց, և նաեւ մարմնացած յեղափոխական էր: Թըր- քական կասկածոտ կառավարութիւնը երկու անգամ, դասատուութեան մի- ջոցին, աշակերտներին ներկայութեամբ, ձերբակալել բանտն էր դրել նորան, բայց ձեռքում չ'ունենալով հիմնա- ւոր փաստեր, կրկին և կրկին արձա- կել էր:

96 թուականներին, երբ մայրա- քաղաքում օտարների թիւի տակ, մեծ պետութիւնների ներկայացուցիչների աչքի առաջ Հայութիւնը օրհասական ձգնաժամում ոչխարների պէս մորթ- ւում էր, երբ անմեղների արիւնով ներկուում էր մայրաքաղաքի փողոց- ները, երբ անմեղ զոհերի կիսամեռ դիակները ծովի յատակն էին իջեց- նում, Սուրէնեանը մասնուում է՝ թուրքերի ձեռքում կոյր գործիք դարձած իր ուսուցիչ ընկերներից: Սուրէնեանի կեանքը վերցնել չեն ու- զում կաշառակեր պաշտօնեաները, մինչև հօր անբաւ հարստութիւնը ամբողջապէս կրանեն: Մի ամբողջ տարի, նրան, առանց իսկ հարցաքննու- թեան ու կեղծոճական կառավարու- թեան իմաց տալու, էրզրումի բան- տում տանջում են: Հարուստ Հայրը Հազարներով կաշառներ է տալիս քաղցած պաշտօնեաներին, սակայն այս օրը վաղան ձգելով՝ բողոքովին սենեկացնում են նրան. իր հարստու- թիւնը պաշտօնեաների, և մեծաւ մաս- ամբ վալիի փորն է մտնում: Մնում է մեծազին տունը: Վալին մի իրի- կուն կանչում է վաճառական Սու- րէնեանին և առաջարկում մի վերջին պայման՝ որդին ազատելու:

(Շարունակելի)

